

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ – «Հայրուսագազարդ» ՓԲԸ Վարչության
նախագահ – Գլխավոր տնօրեն

2 մայիսի, 2009թ.

Ծաղկաձոր, Հայաստանի Հանրապետություն

Եվրոպայի Խորհրդի Քաղաքական դասընթացների երևանյան դպրոց

Ереванская школа политических обучений Совета Европы

Yerevan school of political studies of the Council of Europe

Տիկնայք և պարոնայք

Այսօր ակնհայտ է, որ էներգետիկ անվտանգությունն իր ազդեցությունն է թողնում բնակչության կյանքի որակը և պետության կառավարման արդյունավետ ձեռքերը որոշող ցուցանիշների և, ընդհանուր առմամբ, սոցիալ-տնտեսական համակարգի կայունության վրա: Տնտեսական պայմաններն են որոշում բնակչության միջին կենսամակարդակը, ինչպես նաև սոցիալական տարբեր խմբերի համար էներգետիկ սպառման միջին մակարդակը, բնակչությունը ձևավորում է իր կարիքները եկամուտներին համարժեք: Այս գործոններն են թելադրում ընդհանուր տնտեսական աճի և այս կամ այն երկրի արդյունաբերական զարգացման նպատակային ուղղությունները:

Առկա պայմաններում ի՞նչ տեղ կարող է զբաղեցնել Հայաստանը տարածաշրջանի էներգետիկ շուկայում: Ի՞նչը պետք է Հայաստանի համար ուղենիշ հանդիսանա էներգետիկ պաշարների գլոբալ մրցակցության պայմաններում՝ համաշխարհային աննախադեպ էներգետիկ ճգնաժամի ֆոնի վրա: Ի՞նչը պետք է ընկած լինի տարածաշրջանի էներգետիկ անվտանգության հիմքում: Այս հարցերի պատասխանները կարևոր են Հայաստանի էներգետիկայի ոլորտում որակապես նոր և արդյունավետ քաղաքականության ձևավորման համար:

ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԵՊԻ ԿԱՅՈՒՆ ԵՎ ԴԻՆԱՄԻԿ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՈԼՈՐՏ

Էներգետիկ ճգնաժամը Հայաստանում և որպես դրա հետևանք՝ 90-ական թվականներին տնտեսական խոր անկումը մեկ անգամ ևս հաստատեցին էներգետիկ անվտանգության ապահովման կենսական անհրաժեշտությունը: Ունենալով դիվերսիֆիկացված և ինքնաբավ էներգետիկ համակարգ, որը ներկայացված էր միջուկային, ջերմային և հիդրոէներգետիկայով, գազի սեկտորով, ինչպես նաև բարձրավոլտ և ցածրավոլտ էլեկտրահաղորդման գծերի զարգացած համակարգով, 1992-1995թթ.-ին Հայաստանի սպառողներին էլեկտրաէներգիա էր մատակարարվում միայն օրվա մեջ մեկ-երկու ժամ: Բավական է նշենք, որ բնական գազը գործնականում անհասանելի էր Հայաստանի բնակչության լայն զանգվածներին, իսկ կենտրոնացված ջերմամատակարարումը գտնվում էր ծայրահեղ վիճակում: Հանրապետության գազի համակարգը, ըստ էության, գոյատևման եզրին էր: Բնագավառի տեխնիկական վերազինման և ներդրումային ծրագրերի համար միջոցների լուրջ պակաս էր զգացվում: Եվ այս ամենը ուղղակիորեն անդրադառնում էր այդ տարիներին Հայաստանի էներգետիկ անվտանգության իրական չափորոշիչների և տնտեսության վրա ընդհանրապես:

Ծայրահեղ բարդ իրավիճակով էր թելադրված 1995թ.-ից սկսած ՀՀ էներգետիկ բնագավառում մի շարք կտրուկ բարեփոխումների անհրաժեշտությունը, որոնք էականորեն վերակազմավորեցին ամբողջ համակարգը: Նշենք Հայաստանում իրականացված առանցքային բարեփոխումներից հիմնականները՝

- էներգակիրների գների ազատականացում,
- «Հայէներգո» ուղղահայաց-ինտեգրացված ընկերության և ամբողջ հատվածի վերակազմավորում՝ մասնագիտացված ընկերությունների միջև գործառույթների հստակ բաշխմամբ,
- օրենսդրական սահմանում և տեխնիկական ապահովում սպառվող էներգիայի (էլեկտրաէներգիա և բնական գազ) անհատական հաշվառման համար,

- անկախ սակագնային և լիցենզավորող հանձնաժողովի ստեղծում,
- ծախսածածկ սակագների օրենսդրական սահմանում էներգետիկ շուկայի բոլոր մասնակիցների համար և էլեկտրաէներգիայի բավականաչափ բարձր սակագների սահմանում ՀՀ սպառողների համար, ինչը ԱՊՀ երկրների համար իրոք դժվար, ժողովրդականություն չվայելող և աննախադեպ լուծում էր՝ ՀՀ-ում հարաբերականորեն ոչ բարձր կենսամակարդակի պայմաններում,
- էներգամատակարարման դադարեցման օրենսդրական իրավունքի իրականացում չվճարումների դեպքում, և ֆինանսական վճարման կարգապահության սահմանում,
- լայնամասշտաբ սեփականաշնորհում և էներգետիկայում օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում, ներառյալ՝ օտարերկրյա մասնակցությամբ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը,
- էներգիայի սեփական վերականգնվող աղբյուրների (հիդրո-, արևային և քամու էներգետիկա) օրենսդրական խրախուսում և զարգացման խթանում:

Անցած ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսության մեջ էներգետիկ ոլորտը դարձավ առավել համարձակ բարեփոխվող բնագավառը, և այսօր միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կարծիքով (Միջազգային արժույթային հիմնադրամ, Համաշխարհային բանկ և այլն) Հայաստանը անցումնային տնտեսություն ունեցող երկրների (transition countries) շարքում առաջատար տեղ է զբաղեցնում էներգետիկայում իրականացված բարեփոխումների մակարդակով, որոնք ուղղված են լիբերալ էներգետիկ շուկայի ստեղծմանը և հավասար պայմաններ են ստեղծում տնտեսական գործունեության իրականացման համար, արդյունավետորեն ապահովում են վերջնական սպառողների շահերը և այլն:

1997թ.-ին հայ-ռուսական համատեղ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հիմնադրումը նոր թափ հաղորդեց հանրապետության գազի բնագավառի զարգացմանը: Այսօր գազի ոլորտը Հայաստանի տնտեսության արագ զարգացող բնագավառներից է՝ մեծ ճանապարհ անցնելով պրակտիկորեն լճացման վիճակից մինչև դինամիկ և ագրեսիվ զարգացող ընկերություն: Հայաստանի գազի շուկայում վերջին տարիներին արձանագրված «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գործունեության հիմնական ցուցանիշների դինամիկ աճի շնորհիվ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ դարձավ ՀՀ-ի էկոնոմիկայի առաջատարներից մեկը: Այսպես, 2002թ.-ի համեմատ՝ բնական գազ սպառողների թիվը ավելացել է 4,3 անգամ, գազաֆիկացված բնակավայրերի թիվը՝ 1,9 անգամ, գազաբաշխիչ ցանցի երկարությունը՝ 2,3 անգամ, բնական գազի ներկրումը՝ 2,1 անգամ, բնական գազի իրացումը՝ 2,2 անգամ: Պետական բյուջե կատարած վճարումներով (2009թ.-ի առաջին եռամսյակի տվյալներով) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն հանրապետությունում զբաղեցնում է երկրորդ տեղը (2008թ.-ի տվյալներով՝ երկրորդ տեղը), իսկ սոցիալական վճարումների մասով՝ երրորդ տեղը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՍԱԿԱՐԴԱԿԸ

Ինչպիսի՞ն է ներկայումս Հայաստանի էներգետիկ անվտանգության իրական վիճակը:

Տրված հարցին պատասխանելու համար, որպես կանոն, փորձագետներն օգտվում են, այսպես կոչված, երկրի էներգետիկ անվտանգության մակարդակի ինտեգրալ գնահատումից, որի էությունը համակարգի վիճակը առավել լիարժեք արտացոլող քանակական ինդիկատորների համակարգի ձևավորումն է, նրանց

փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրությունը՝ ճգնաժամային վիճակի անցումը որոշող **շեմային արժեքների** հետ համեմատած: Ճգնաժամային ինդիկատորների համար ձևավորվում են նրանց վիճակների, ինչպես նաև ամբողջությամբ վերցված ողջ համակարգի բարելավմանն ուղղված համալիր միջոցառումներ և առաջարկություններ:

Նմանատիպ հետազոտությունները Հայաստանի համար ցույց են տալիս լուրջ առաջընթաց, որը մեր երկիրը ձեռք է բերել 1990-2005թթ.-ին: Այսպես, աշխարհի 124 երկրների ընդհանուր ցանկում, որոնց համար կատարվել են համապատասխան հաշվարկներ, նշված ժամանակահատվածում էներգետիկ անվտանգության գնահատված մակարդակով Հայաստանի Հանրապետությունը 80-րդ տեղից բարձրացել է 55-րդ տեղը, որն արձանագրում է ակնհայտ առաջընթաց և, այսպես ասած, հեղափոխական ճեղքում՝ 90-ական թվականների սկզբին առկա իրավիճակի համեմատ: Հատկանշական է նաև այն, որ 2005թ.-ին էներգետիկ անվտանգության մակարդակով ԱՊՀ երկրների շարքում, Ուկրաինայի և Բելառուսի հետ համահավասար, Հայաստանը զբաղեցրեց «հարմարավետ» դիրքերից մեկը: ԱՊՀ երկրներից ամենաբարձր հաշվարկային ցուցանիշը ստացել է Ռուսաստանի Դաշնությունը: Ռուսաստանի, Հայաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ցուցանիշները համապատասխանում են էներգետիկ անվտանգության միջին մակարդակին, իսկ նրանց շարքում էներգետիկապես անվտանգ համարվող երկիր չէր եղել ո՛չ 1990թ. և ո՛չ էլ 2005թ.-ին: Հայաստանի առաջընթացը հնարավոր դարձավ էներգետիկայի բնագավառում նպատակային ծրագրերի իրականացման շնորհիվ, որոնք ուղղված էին սպառված էներգառեսուրսների (էլեկտրաէներգիա և գազ) հաշվառման համակարգի կատարելագործմանը, էներգետիկ շուկայի սուբյեկտների միջև փոխազդեցության շուկայական մեխանիզմների ապահովմանը, ՀՀ բնական գազի մատակարարման անվտանգության բարձրացմանը (Իրան-Հայաստան գազատար, Աբովյանի ԳՄԴԿ վերականգնում), վերականգնվող էներգիայի սեփական աղբյուրների զարգացմանը և խրախուսմանը (հիդրո-, արևային, քամու էներգետիկա) և այլն:

Հարկ է նշել, որ տվյալ ցուցանիշով մեր երկիրը չի զիջում տարածաշրջանի սեփական էներգետիկ պաշարներ ունեցող երկրներին:

Այնուամենայնիվ, այս ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակվեն՝ լուծումներ պահանջող մի շարք միջոցառումներ իրականացնելու հեռանկարով: Լինելով տարածաշրջանային էներգետիկ շուկայի մասնակիցներից մեկը՝ Հայաստանը հստակ պատկերացնում է ոլորտի հիմնախնդիրները, և մտածում է սեփական միջոցներով էներգետիկան զարգացնելու հեռանկարների մասին: Հայաստանն այսօր չունենալով սեփական էներգետիկ պաշարներ, միաժամանակ գտնվելով տրանսպորտային հաղորդակցությունների առումով բարդ տարածաշրջանում՝ ոչ միանշանակ քաղաքական-տնտեսական գործընթացների ֆոնի վրա ցուցադրում է երկրի էներգետիկ անվտանգության անհրաժեշտ մակարդակի պահպանման խնդիրները ժամանակային առումով հաջող լուծելու վառ և հզոր օրինակ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Հուսալի և անվտանգ էներգամատակարարումների իրականացումը այսօր հաջող լուծելու համար անհրաժեշտ է ունենալ սեփական տեղեկատվական ապահովում, գլոբալ էներգետիկ գործընթացների օբյեկտիվ ընկալում, որոնք իրենց ազդեցությունը կունենան Հայաստանի գործընկերների դիրքորոշումների ձևավորման վրա:

Թերևս, ժամանակակից փուլում Հայաստանում հարկավոր են տարածաշրջանային և համաաշխարհային էներգետիկ շուկաների վիճակների կանխատեսման անկախ կենտրոններ, անհարժեշտ է միասնական տեղեկատվական-վերլուծական համակարգ: Առանց դրա տարածաշրջանում էներգետիկ շուկայի զարգացման հեռանկարների թեմայի վերաբերյալ բոլոր

առաջարկները և վերլուծական դատողությունները կարող են լինել ոչ լիարժեք և սուբյեկտիվ:

Ձեկույցում ես կցանկանայի կանգ առնել նաև մեկ այլ, ոչ քիչ կարևոր հարցի վրա: Այսօր տարածաշրջանային էներգետիկ նախագծերը բախվում են քաղաքական պատճառներով սահմանափակվող տարանցիկ սխեմաներին և չեն կարող տարածաշրջանային բազմակողմանի համագործակցության օրինակ հանդիսանալ: **Նման իրավիճակի առաջնային պատճառը քաղաքական մրցակցությունն է**, էներգետիկ «ծանրքաշայինների» միջև մրցակցությունը հանքավայրերի, հանքահորերի, խողովակաշարերի օգտագործման հնարավորությունների համար: Հարավային Կովկասի տարածաշրջանում այդպիսի մրցակցությունը փոխում է իրական գործընկերության պատկերը՝ մեր երկրներին ներքաշելով ոչ թե տնտեսապես հիմնավորված նախագծերի, այլ քաղաքականապես անհիմաստ ու անհեռանկար բանավեճերի մեջ: Այդ ամենը իր հերթին /անդրադառնում է/ խփում է մեր երկրների յուրաքանչյուր բնակչի գրպանին: Այդպիսի զուտ քաղաքական և թանկ ծրագրերի օրինակ է հանդիսանում Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը: Տարբեր, այդ թվում՝ ազգային մակարդակներում չափազանց անբավարար, իսկ հաճախ նաև միակողմանի է լուսաբանվում տարածաշրջանի էներգետիկ իրավիճակը: Այլ խոսքով՝ **տարածաշրջանում առկա են չհայտարարված տեղեկատվական պատերազմներ էներգետիկայի բնագավառում**: Տարածաշրջանի երկրների բնակչության ցածր իրազեկությունը բերում է նրան, որ էլիտան առանց հասարակական դիմադրության կյանքի է կոչում պատշաճ տնտեսական հիմնավորում չունեցող քաղաքական ծրագրեր, որոնք «դանդաղ գործողության ռումբ» են դառնում էներգետիկայի համար և սպեկուլյատիվ դրսևորումներ են առաջացնում էներգետիկների միջազգային շուկաներում՝ դառնալով նաև հերթական ֆինանսական և տնտեսական ճգնաժամերի պատճառ:

Այնուամենայնիվ, մեր դիրքորոշումը տարածաշրջանում առկա էներգետիկ ծրագրերի հանդեպ դրական է: Անկասկած, ավելի լավ կլիներ, եթե Հայաստանը այդ ծրագրերի մասնակիցը լիներ: Սակայն, նույնիսկ եթե դա այդպես չէ, ոչ մի վատ բան չկա, որ այդ ծրագրերն իրականացվում են: Տարածաշրջանում զարգացած էներգետիկ ենթակառուցվածքի առկայությունը նպաստում է տարածաշրջանի էներգետիկ անվտանգության ընդհանուր մակարդակի բարձրացմանը, ինչը չի կարող դրական ներգործություն չունենալ, այդ թվում՝ Հայաստանի վրա:

Այսօր տարածաշրջանի բոլոր երկրներին անհրաժեշտ է տեղեկատվական մատուցման նոր որակ՝ էներգետիկայի ոլորտում քաղաքական և գործարար խավերի նախաձեռնություններին աջակցելու համար: **Անհրաժեշտ է «բիզնես-իշխանություն» փոխադարձ և կայուն կապ**: Անհրաժեշտ են պայմաններ, որպեսզի գործարար խավի, այսպես ասած, կրեատիվ պլաններն ու ծրագրերը ունենան օբյեկտիվ և մասնագիտական աջակցություն տեղեկատվական միջավայրում, դրանով իսկ մեր երկրների քաղաքական ղեկավարների համար ստեղծելով անհրաժեշտ «ֆոն» և դրդապատճառներ՝ գիտակցելու այդ ծրագրերի կենսունակությունն ու կարևորությունը երկրի զարգացման համար: Նշված գործակցությունը պետք է ծառայի տարածաշրջանում էներգետիկ ծրագրերի փոխհետադրման համար անհրաժեշտ և հարամարավետ միջավայրի ստեղծմանը:

Ներկայումս, ցավոք, իրավիճակը հեռու է նշված ուղեմիշերից: Երկրներից յուրաքանչյուրը, անկասկած, ինքն է ընտրում զարգացման իր մոդելը՝ էներգետիկ անվտանգության կարիքները ապահովելու համար, բայց միևնույն ժամանակ, հաշվի չեն առնվում հարևան երկրներում առկա տենդենցներն ու ծրագրերը, որտեղ, մեր կարծիքով, կան փոխգործակցության լայն հնարավորություններ և ազգային էներգետիկ հատվածների օպտիմալացման հսկայական դաշտ: Վերը նշվածը տեղի է ունենում այն հիմնական պատճառով, որ ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային էներգետիկ ծրագրերի վերաբերյալ

տեղեկատվությունը գրեթե ամբողջությամբ քաղաքականացված է, և տարածաշրջանի երկրների քաղաքական և տնտեսական ինտեգրման հնարավորությունների հանդեպ վստահությունը բացակայում է, ինչն էլ իր հերթին բերում է նրան, որ երկրներից յուրաքանչյուրը զինվի էներգետիկ առավելագույն անկախության և ինքնաբավարարման ապահովման սեփական հայեցակարգով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս համաշխարհային, և մասնավորապես տարածաշրջանային էներգետիկ շուկան, իր վրա զգում է միջազգային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը, ինչի արդյունքում և ուժեղանում է մրցակցությունը: Վարկային միջոցների սահմանափակումը և անվճարունակությունը կարող են բացասաբար անդրադառնալ տնտեսության իրական հատվածի մեծ թվով ձեռնարկությունների գործունեության և արդյունքների վրա, հատկապես նրանց, որոնք այլ հանգամանքներում ծագած խնդիրներ են ունեցել:

Ելնելով համաշխարհային տնտեսության ընթացիկ լարված իրավիճակից՝ կարելի է նշել, որ մոտակա ժամանակներում հնարավոր է **անկում աշխարհի շատ, այդ թվում և զարգացած երկրների տնտեսություններում:** Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի տվյալները, ցավոք, միայն հաստատում են այս կանխատեսումը: Ճգնաժամի զգալի հետևանքը կլինի այն, որ Հայաստանում տնտեսական աճի դանդաղ տեմպերը կհանգեցնեն ՀՀ բնակչության եկամուտների իրական աճի դանդաղեցման, ինչով էլ սահմանափակվում են բնակչության ընթացիկ սպառման, ներդրումների և խնայողությունների հնարավորությունները:

Վերը նշվածը Հայաստանի համար առանձնանում է մի շարք այլ գործոններով, ինչպիսիք են՝

- կախվածությունը երկրի սահմաններից դուրս աշխատող հայրենակիցների դրամական փոխանցումներից:
- հայկական տնտեսության համեմատաբար ցածր ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, որը Հայաստանին զրկում է տնտեսական մանրի տարածքից և բերում է ճգնաժամի հետևանքներին ճկուն արձագանքելու անկարողության: Չնայած կարելի է նշել, որ տվյալ գործոնը ունի նաև որոշակիորեն դրական էֆեկտ՝ Հայաստանի վրա համաշխարհային տնտեսության մեջ կատարվող կտրուկ տատանումների ազդեցության իներցիայով պայմանավորված:
- ներդրողների վստահության պակասը, որոնց պոտենցիալ քանակը ճգնաժամի ժամանակ առանց այն էլ նվազում է, ինչը բերում է Հայաստանում ներդրումային դաշտի ռիսկայնության բարձրացման և անկայունության՝ թուլացնելով Հայաստանի տնտեսությունը:

Այսպիսով, Հայաստանում տնտեսական ճգնաժամը արտահայտվում է համաշխարհային ճգնաժամի հետ կապված երևույթներով՝ արդեն գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմանների առանձնահատկությունների հիման վրա:

Հարկ է նշել նաև, որ նույնիսկ ճգնաժամի պայմաններում էներգետիկան մնում է առավել գրավիչ պետական և մասնավոր ներդրումների համար, չնայած վերոնշյալ դժվարությունները կարող են ազդեցություն ունենալ ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրերի տեմպերի և ծավալների վրա: Սրան պետք է ավելացնել նաև, որ **էներգետիկան, լինելով համակարգաստեղծ ոլորտ, ի վիճակի է դառնալ այն «լուկոմոտիվը»,** որը կարող է իր հետևից տանել երկրի տնտեսությունը և զգալիորեն ակտիվացնել Հայաստանի Հանրապետության ու

հարևան երկրների միջև տնտեսական փոխանակումը՝ իր լուծման ներդնելով ՀՀ էկոնոմիկայի դինամիկ զարգացման գործում:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐԱԿ

Հայաստանի Հանրապետությունը իր աշխարհագրական տարածքով հետաքրքիր տեղ է զբաղեցնում ածխաջրածնային պաշարներով հարուստ Ռուսաստանի, Իրանի և Կասպյան ավազանի երկրների միջև, իսկ կայացած և ոչ պակաս դինամիկ զարգացող ռազմավարական համագործակցությունը համաշխարհային էներգետիկական «ծանրաքաշայինների» հետ («Գազպրոմ» ԲԲԸ, «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» «Ռուսներգոատոմ») Հայաստանի համար ձևավորում են որակապես նոր պայմաններ ու բարենպաստ հնարավորություններ են ստեղծում հանրապետությունը տարածաշրջանի էներգետիկական շուկայում կարևոր դերակատարներից մեկը դարձնելու համար:

Հայաստանի էներգետիկական անվտանգության մակարդակի հետագա բարձրացումը, էներգամատակարարման հուսալիությունն ու արդյունավետությունը, ոլորտի կայուն զարգացումը կարող են և պետք է ապահովվեն հետևյալ միջոցներով՝

- ներքին տնտեսական փոխանակության ակտիվացում էներգետիկայում՝ համագործակցության փոխշահավետ և ճկուն սխեմաներ գտնելու միջոցով, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտահանման մրցունակ շուկայի ձևավորում,
- արտահանմանն ուղղված էներգետիկական ծրագրերի աջակցության նպատակով ՀՀ պետական քաղաքականության մշակում ու իրականացում, որի հիմքում պետք է ընկած լինի «ճկուն» գնային քաղաքականությունը:

Այսօր ակնհայտ է, որ Հայաստանի էլեկտրաէներգետիկական ոլորտը արտահանման մեծ ներուժ ունի: Ներկայումս Հայաստանի էլեկտրակայանների տեղակայված հզորությունը օգտագործվում է միայն մեկ երրորդով: Հեղինակավոր կազմակերպությունների հետազոտությունների տվյալներով վերջին 10 տարիներին Հայաստանն ունի տեղակայված հզորության զգալի ավելցուկ: Էներգետիկայի կարգավորման մարմինների տարածաշրջանային ասոցիացիայի գնահատականներով այն կազմում է 1930 ՄՎտ:

Հայաստանից էլեկտրաէներգիայի արտահանման վերջին տարիների պատմությունը, ինչպես նաև այդ բնագավառում առկա ներուժը վկայում են հզոր ռեզերվների մասին, որոնց օգտագործումը հնարավոր է միայն պետության արտահանման քաղաքականության մեջ որակական փոփոխությունների դեպքում: Վերջին մի քանի տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի ներկրումը ՀՀ չի գերազանցում տարեկան 400 հազ. կՎտ.ժ (բացառությամբ 2007թ.): Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա 2003-2005թթ. արձանագրվել է արտահանման ծավալների զգալի աճ, իսկ 2005թ.-ին այն գերազանցել է վերջին 10 տարիների իր պիկային արժեքը և կազմել երկրում արտադրված ամբողջ էլեկտրաէներգիայի ավելի քան 16%-ը:

Մինչև 2006թ.-ի առաջին եռամսյակը Հայաստանի էլեկտրաէներգիայի արտահանման հիմնական շուկաներից մեկը համարվում էր Վրաստանը: Այսպես, 2005թ.- 2006թ.-ի առաջին եռամսյակում Հայաստանից Վրաստան արտահանվող էլեկտրաէներգիայի բաժինը կազմել է էլեկտրաէներգիայի արտահանման ընդհանուր ծավալի 62,8%-ը:

Սակայն սկսած 2006թ.-ի մարտ ամսից այլևս արտահանում չի իրականացվում Վրաստան:

Այսպիսով, կարելի է փաստել, որ **Հայաստանի էներգետիկ համակարգի ներքին առևտրային գործունեությունը ներկայումս սահմանափակվում է էլեկտրաէներգիայի կանոնավոր փոխադարձ առաքումներով դեպի Իրան և հակառակը:**

Այսօր ակնհայտ է, որ չնայած տարածաշրջանի մի շարք երկրներում ածխաջրածնային ռեսուրսների սեփական զգալի պաշարների առկայությանը, միջնաժամկետ ծրագրերով էլեկտրաէներգիայի նոր արտադրական հզորությունների մուտքը Վրաստան, Թուրքիա և Իրան ի վիճակի չէ ծածկելու էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկը: Հետևաբար, **Հայաստանի համար տարածաշրջանի երկրները հեռանկարային շուկա են հանդիսանում**, որտեղ ձևավորված է պահանջարկը և կանխատեսվող սպառումը: Ընթացիկ և հեռանկարային արտադրական հզորությունները, տարածաշրջանի սպառողներին տարածքային առումով մոտ գտնվելը անժխտելի փաստ է: Բացի այդ, բնական գազի մրցունակ գնի հնարավորությունը, էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետորեն հավասարակշռված կառուցվածքները և մի շարք այլ գործոններ վստահեցնում են, որ «հայկական» կիլովատը այսօր տարածաշրջանում լիովին մրցունակ է: Հաշվի առնելով իրանական կողմի հետ բնական գազի ներկրման մասին կնքված պայմանագրից բխող Հայաստանի երկարաժամկետ պարտավորությունները, որով նախատեսվում է մատակարարված գազի դիմաց էլեկտրաէներգիայի փոխադարձ առաքում 1 խոր. բնական գազ - ՅկՎտժ փոխանակային գործակցով, ապա Հայաստանի էներգահամակարգից առաքվող էլեկտրաէներգիայի գումարային ծավալները դեպի Վրաստանի, Թուրքիայի և Իրանի էներգահամակարգներ կարող են գումարային ծավալով կազմել տարեկան 6,0 և ավելի մլրդ. կՎտ.ժ:

Մասնավորապես, ուզում են առանձնացնել «Հայֆուսգազարդ» ՓԲԸ արտահանման հնարավորությունները, քանի որ այսօր Ընկերությունը լուրջ հավակնություններ ունի այս ոլորտում: Ռազմավարական որոշ նկատառումներից ելնելով, Ընկերությունը գիտակցում է, որ էլեկտրաէներգետիկական պրոֆիլային բիզնես է և թույլ է տալիս **զգալի սիներգետիկական էֆեկտ** ապահովել: Բացի այդ, Ընկերությունը տնօրինում է գազաէներգետիկ խոշոր օբյեկտների, ինչպիսիք են Իրան-Հայաստան գազամուղը, արդիականացվող Հրազդան ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցների հետ մանևրելու հնարավորությունը: Այս ամենը թույլ է տալիս ասել, որ «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն լուրջ հնարավորություններ ունի մոտ հեռանկարում տարածաշրջանային էներգետիկ շուկայի առանցքային խաղացողներից մեկը դառնալու:

Նշված պայմաններում **պետության կողմից գրագետ էներգետիկ ներքին քաղաքականության** մշակումն ու իրականացումը Հայաստանին տնտեսական և դրա հետ միասին քաղաքական լուրջ դիվիդենդներ կարող է բերել: Հայաստանի արտահանման քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի եզակի և արդյունավետ հնարավորությունների ստեղծմանը՝ հարևան երկրների հետ Հայաստանի Հանրապետության ներքին տնտեսական փոխանակումն ակտիվացնելու համար, որի միջոցով զգալիորեն կարելի է բարձրացնել երկրի էներգետիկական անվտանգության աստիճանը: ՀՀ-ից էլեկտրաէներգիայի արտահանման խրախուսման պետական քաղաքականությունը **շարժառիթներ պետք է ստեղծի տնտեսվարող սուբյեկտների համար**, որոշ դեպքերում էլ նրանց պարտավորեցնի, որպեսզի ակտիվ լինեն տարածաշրջանում էներգետիկական համագործակցության փոխշահավետ ձևերի և միջոցների որոնման և համաձայնեցման գործում: Մեր համոզմամբ, տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի փոխշահավետ էներգետիկական համագործակցության ներուժը ներկա դրությամբ դեռևս սպառված չէ և կարող է իր մեջ տարբեր ձևեր ներառել, սկսած էլեկտրաէներգիայի ուղղակի արտահանման-ներմուծման գործառույթներից և վերջացրած բարդ տոլլինգային սխեմաները և (սվոպային)

փոխանակային գործառույթները: Բերենք մի քանի այդպիսի սխեմաների օրինակներ.

- Սխեմա՝ «գազ Վրաստանից կամ Իրանից էլեկտրաէներգիայի դիմաց»
- Աբովյանի ԳՄԿ-ի ընդլայնումը տարածաշրջանային կարիքների համար
- Էժան էլեկտրաէներգիայի առաքում գարուն-ամառ ժամանակահատվածում Վրաստանից Հայաստան, այնուհետև՝ Իրան կատարվող մատակարարումների նպատակով, ինչպես Հայաստան առաքվող բնական գազի վճարման հաշվին, այնպես էլ Իրանում նրա կուտակման և աշուն-ձմեռ ժամանակահատվածում (սպառման պիկի ժամանակահատվածում) հետադարձ դեպի Հայաստան առաքումների համար՝ սեզոնային էլեկտրաէներգիայի փոխանակման գործող պայմանագրի շրջանակներում:
- համենատաքար էժան էլեկտրաէներգիայի առք թուրքմենստանում, նրա մատակարարում Իրանին (հաշվի առնելով թուրքմենստանի և Իրանի միջև գործող միջհամակարգային էլեկտրահաղորդակցման գծերի առկայությունը) և փոխանակում իրանական բնական գազի հետ և մի շարք այլ սխեմաներ:

Գործունեության մեկ այլ հեռանկարային ուղղություն կարող է հանդիսանալ **հայկական կապիտալի արտահանումը տարածաշրջանի երկրներ**: Հարավային Կովկասի տարածաշրջանի և նրա հարևան երկրները գտնվում են խոշոր միջազգային, հիմնականում նավթագազային էներգետիկական ծրագրերի խաչմերուկում, ինչը տարածաշրջանը ավելի գրավիչ է դարձնում միջազգային կապիտալի համար: Այս ենթատեքստում կենսունակ է դառնում հայկական կապիտալի ակտիվացման գաղափարը տարածաշրջանային շուկաներում, մասնավորապես մի շարք երկրների, օրինակ՝ թուրքմենստանի, ԻԻՀ և ՌԴ և այլ երկրների նավթագազային սեկտորում հայկական կապիտալի մասնակցության միջոցով:

Հաշվի առնելով վաստակած ներուժը, առկա հնարավորությունները, ՀՀ և թուրքմենստանի միջև միջպետական հարաբերությունների ռեսուրսները՝ հնարավոր են լայնածավալ ներդրումներ թուրքմենստանի նավթագազային ոլորտում՝ հայկական մասնավոր և խառը կապիտալի միջոցների հաշվին: Արդիական է նաև **թուրքմենստանում, ՌԴ-ում և ԻԻՀ-ում նավթագազային հանքավայրերի համատեղ մշակումը**, այդ թվում լիցենզիաների ստացում հանքավայրերի մշակման համար, հին հանքավայրերի վերագործարկում, ուղեկից գազի արտահանում և օգտագործում:

Նշեն երկու գլխավոր մոտիվացիաներ հայկական կողմի հետ ապագա կոնցեսիայի պոտենցիալ մասնակիցների համար.

- մասնավոր քիզմեսի համար՝ էներգետիկ պաշարներով հարուստ թուրքմենստանի նավթագազային շուկայում ներդրումների հնարավորություն՝ թուրքմենստանի նավթագազային հանքավայրերի մշակման և շահագործման իրավունքի ձեռք բերման ճանապարհով, հայթուրքմենական միջպետական տնտեսական համագործակցության հովանու ներքո),
- Հայաստանի Հանրապետության համար՝ ապագայում Հայաստանի Հանրապետությունը ածխաջրածնային պաշարների սեփական ռեսուրսային բազայով ապահովելու հնարավորություն:

Թուրքմենստանում ապագա ծրագրերի ֆինանսավորման աղբյուրներից մեկը կարող է հանդիսանալ ստեղծվող **Համահայկական բանկը**, որը նախատեսված է 2009թ.-ի վերջին: Հաշվի առնելով Համահայկական բանկի հետաքրքրությունների հետագա ոլորտը, մասնավորապես հայերի կողմից իրականացվելիք ենթակառուցվածքային և նորարարական ծրագրերի

Ֆինանսավորումը ոչ միայն հանրապետությունում, այլ նաև նրա սահմաններից դուրս, ակնհայտ է դառնում նշված կառույցի մասնակցության նպատակահարմարությունը տարածաշրջանային երկրներ հայկական կապիտալի «արտահանման» գործում:

Հայաստանը, ունենալով երկու գազատար և գազի ստորգետնյա պահեստավորման հզորություններ, ինչպես նաև արտադրական հզորությունների մրցակցային ավելցուկ, բոլոր հնարավորություններն ունի դառնալու **տարածաշրջանային ազատական էներգետիկ հրապարակ**: Այս հավակնոտ ծրագիրը ենթադրում է արդեն մոտ ապագայում մի շարք նպատակային միջոցառումների իրականացում Հայաստանի տնտեսության մեջ և հատկապես էներգետիկ ոլորտում:

Էլեկտրաէներգիայի արտահանման ոլորտում ճկուն գնային և պետական քաղաքականության իրականացումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվացումը տարածաշրջանի երկրների հետ էներգետիկական համագործակցության նոր սխեմաների և մեթոդների որոնման գործում՝ թույլ կտա որակական նոր մակարդակի բարձրացնել Հայաստանի դերն ու տեղը տարածաշրջանի էներգետիկական շուկայում:

Թվարկվածը չի կարող իրականացվել ամբողջությամբ, եթե տարածաշրջանի երկրները չգիտակցեն էներգետիկ գործակցության միավորող հեռանկարները: Էներգետիկ քաղաքականության ազգային մոտեցումների սինքրոնիզացումը նվազագույնի է հասցնում քաղաքական ռիսկերը և որոշակիացնում գործունեության այն դաշտը, որտեղ կնքվում և իրականացվում են բիզնես –պայմանագրեր: Սա ի վերջո բխում է մեր երկրների յուրաքանչյուր բնակչի ամենակենսական և իրական շահերից:

Այսօր Հայաստանը տարածաշրջանում առկա էներգետիկ նոր իրավիճակը գնահատում է որպես դրական փաստ և գիտակցում է տարածաշրջանային խոշոր նախագծերում ներգրավված լինելու իրական հնարավորությունը: Այս ամենով հանդերձ, մեր երկիրը լուրջ հնարավորություններ ունի դառնալու Հարավային Կովկասի էներգետիկական քարտեզում գլխավոր դերակատարներից մեկը:

Շնորհակալություն ուշադրության համար: